

**ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	Օտարագիր հայ գրողներ. ուսուցման հարցեր
Առարկա՝	Հայոց լեզու և հայ գրականություն
Հեղինակ՝	Մանե Արողիկի Ավագյան
Ուսումնական հաստատություն՝	ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ա/դ.

Ներածություն

19-20-րդ դարերում աշխարհով մեկ սփռված հայությունը ձևավորեց հայկական սփյուռքը: Սփյուռքում ապրող և արարող հայ գրողների մի մասի ստեղծագործության լեզուն օտար էր: Օտարագր հայ գրականությունը մեր ազգային, բնիկ մշակույթի պատմության մի մասն է. այն մի երևույթ է, որ արտաքուստ «յուրային» չէ, սակայն ունի ազգային արմատներ: Օտարագիր հայ գրողներին ևս հետաքրքրել են սեփական ժողովրդի ճակատագիրը, Մեծ եղեռնը, ազգային արմատների ու դիմագծի որոնումը:

Թեմայի արդիականությունը: «Օտարագիր հայ գրողներ. ուսուցման հարցեր» թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ առավել քան երբևէ մեր օրերում արդիական է տարագրությունն ու օտար ափերում հայերի հաստատվելը, և օտարագիր հայ գրողների կյանքն ու ստեղծագործությունը կարող են հստակ ուղենիշ լինել օտարին չճանաչելու և ազգային մշակույթը պահպանելու գործում:

Թեմայի առարկան: Օտարագիր հայ գրողների կյանք ու ստեղծագործությունն ու թեմայի ուսուցման խնդիրներն ու առանձնահատկություններն են:

Թեմայի նպատակը: Աշակերտները օտարագիր հայ գրողներին ու նրանց ստեղծագործություններին հիմնավորապես ծանոթանում են միայն ավագ դպրոցի 12-րդ դասարանում և գլխավոր նպատակը հայազգի, սակայն օտար ափերում ապրած և ստեղծագործած հեղինակների ստեղծագործություններին ու նրանց կյանքին աշակերտներին հաղորդակից դարձնելն է:

Թեմայի խնդիրները: «Օտարագիր հայ գրողներ. ուսուցման հարցեր» թեմայի խնդիրներն են՝

1. Աշակերտներին ծանոթացնել օտարագիր հայ գրողների կյանքին և ստեղծագործությանը:
2. Օտարագիր հայ գրողների ստեղծագործությունների օրինակով վեր հանել ազգային արժեքների պահպանման հիմնահարցերը:
3. Միջառարկայական կապեր ստեղծելով՝ ապահովել թեմայի բազմակողմանի և հիմնավոր յուրացումը:

4. Հարստացնել աշակերտների բառապաշարը՝ հանձնարարելով ծանոթանալ հեղինակների ստեղծագործությունների բնագրային տարբերակներին:
5. Աշակերտներին մղել վերլուծական և համագործակցային աշխատանք կատարելուն:

Օտարագիր հայ գրողներ. ուսուցման հարցեր

Օտարագիր հայ գրողներ: Օտարագիր գրականությունը հայ իրականության մեջ ծագեց 19-20-րդ դարերում և պայմանավորված էր հայության մեծ զանգվածների գաղթով Արևմտյան Հայաստանից, որի պատճառը, իհարկե, համիդյան ջարդերն ու 1915 թ. Ցեղասպանությունն էին:

20-րդ դար: 1915 թվական: Մեռյալ գարուն: Կյաքը եռում էր և հանկարծ.... մի ողջ ժողովրդի համար կարծես ժամանակը կանգ առավ, օդը սառեց ու քարացավ... գուցե դա էր պատճառը, որ շնչելը դարձավ անասելի ծանր ու անտանելի ցավագին: Կարծես աշխարհում ամեն բան շուռ եկավ և դժոխքը տեղափոխվեց երկրի վրա: Կարծես ճակատագիրը մեկ անգամ ևս ցանկացավ փաստել, որ հայ ժողովուրդը անմահ է ու հավերժող... բայց ի՞նչ գնով...

20-րդ դար: 1915 թվական: Բոլոր տներում շարժվեցին ժամացույցների սլաքները՝ «հարվածելով այրվող կյանքի թուփերին» և ազդարարելով նոր օրվա սկիզբ ու սահմուկեցնող իրողություն՝ մի ողջ ժողովրդի բնաջնջման սկիզբ...

Բնաջնջումը ինչպես ֆիզիկական էր, այնպես էլ մտավոր, գրականության վրա, որը սկսել էր ձևավորվել օտար ափերում, տարագրությունը գծեց անջրպետ, որը երկու մասի բաժանեց հայկական ծագում ունեցող գրողների ինքնությունը և դրանով իսկ օտարության խարանդը նրանց ստեղծագործությունների վրա. «Սրանց ամեն մեկի կապը հայ գրականության, հայ մշակույթի հետ տարբեր է եղել: Միայն հայկական արմատները դեռ գրականության որակ չեն որոշում»¹: Օտարագիր գրողների մի մասը՝ ինչպես Մայքլ Արլենն ու Անրի Թրուայան ամեն կերպ խուսափում էին հայկական միջավայրը ներկայացնելուց, նրանք կապված չէին հայկական իրականությանն ու հայական մշակույթին: Նրանց կողքին սակայն կային բազմաթիվ այլ գրողներ, որոնց համար Հայաստանը անջնջելի ներկայություն էր:

Հայկական իրականությունից ու մշակույթից օտարվելու միտումը, կարծում ենք, կապված է աշխարհի տարեր ծայրերում սփռված հայերի՝ սեփական ազգի

¹ Եղիազարյան Ա., Հայ գրականություն, Դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 12-րդ դասարանների համար, Երևան, 2023, էջ 164:

ճակատագրին դիմակայելու ու դրա ծանր լծի տակ չկոտրվելու բարդույթով: Օտար ափերում հայտնված հայերից շատերը փորձեցին պաշտպանվել անցյալից՝ հեռանալով, թաքնվելով ու մոռանալով, չգրելով ու չխոսելով հայերեն, չվերհիշելով անցյալը, իրենց համարելով օտարազգի ու մտածելով, որ անցյալը չի հասնի իրենց, սակայն... նրանց ոչ միայն չհաջողվեց հեռանալ անցյալից, այլ այդ անցյալը, միշտ մնաց ստվերի պես նրանց գլխին կախված, մնաց որպես անտեսանելի ներկայություն:

Հետեղեռնյան տարիներ, ճգնաժամային ոչ միայն հոգեբանական, այլ նաև գոյապայքարի տեսանկյունից, տեղահանությունից ու ջադերից հրաշքով փրկվածները սփռվեցին աշխարհով մեկ, հաստատվեցին երկրագնդի տարբեր անկյուններում ու փորձեցին վերապրել՝ պայքարելով ապրելու համար, փախչելով իրականությունից, մի խոսքով, այնպես, ինչպես կարող էին...

Օտար ափերում գեղարվեստական գրականության կողքին զարգացավ նաև վերհուշի գրականությունը, բազմաթիվ օտարազգի հայ գրողներ գրի առան իրենց և իրենց ընտանիքի հուշերը հայկականության, հայկական արմատների և Ցեղասպանության մասին: Ստեղծվեց, ձևավորվեց ու զարգացավ մի սերունդ, որը «...Ազգային խանդաղատանքից գրեթե զուրկ էր, և հայկական միջավայրից ու կենսաձևից այնքան հեռու էր մեծացել, որ ողջ կյանքում ուժգին ճիգեր էր անում անցյալի մասին ինչ-որ բան որսալու համար: Նրան ձգում էր այն աղետը, որ պատահել էր Հայաստանին ու իր ընտանիքին, ինչպես նաև այն համընդհանուր, բարոյական հարցերը, որ ներկայացրել էր ցեղասպանությունը»²:

Հայ օտարազգի գրող Փիփեր Սուրյանը իր կոչումն ու առաքելությունն էր համարում հային ներկայացնել համաշխարհային մակարդակով՝ հնարավորություն տալով այլազգիներին «ճանաչել մեր աշխարհը՝ իրենց աշխարհից»: Նա գիտակցում էր, որ ոչ մի բարոյական իրավունք չունի ձևացնելու, թե ինքը որևէ օրինական կապ ունի հայերի հետ, քանի որ չգիտեր, չէր սովորել իր նախնիների լեզուն ու գիրը: Նա գտնում էր, որ տարիներ անց, երբ ինքը արդեն երջանիկ մարդ է, ապրում է խաղաղ ու հանգիստ իր ընտանիքի հետ, անցյալը, իր ժողովրդի անցյալը և այդ անցյալում կատարված դեպքերը այլևս ոչ մի նշանակություն չպետք է ունենային, սակայն, այնուամենայնիվ,

² Բալաքյան Փ., Ճակատագրի սև շունը, Երևան, 2002, 363 էջ:

դրանք ունեն, կոչենք դա արյան կանչ, համընդհանուր, ժողովրդական հիշողություն, կամ ժառանգաբար, գենային մակարդակի վրա սերնդեսերունդ փոխանցվող կենսափորձ, բայց, ամեն դեպքում, հայը չի կարող անտարբեր մնալ հայի նկատմամբ, նրա ճակատագրի, նրա անցյալի, չի կարող անտեսել ու մոռանալ իր ժողովրդին ու ներել իր թշնամիներին, քանի տարի էլ որ անցնի: Այսպիսով, նույն ԱՄՆ-ում հասակ էր առնում ու հաջողության հասնում մի սերունդ ի դեմս հայազգի գրող Մայքլ Արլենի, որ «ջանում էր հնարավորինս «անգլիշացի» և ոչ հայ լինել և ավելի շատ Մայքլ Արլեն էր, քան Տիգրան Գույումջյան»³, ով իր կյանքի ամբողջ ընթացքում չգրեց հայերի մասին գրեթե ոչինչ, իսկ գրածն էլ սոսկ մաղթանքներ կամ կատակաբանություններ էին, «իսկ տողերէն մէկը կ'ըսեր. «Ո՞վ այսօր պիտի ուզէր հայ ըլլալ, եթէ իսկապէս չէր»»: Նրան նույնիսկ հուղարկավորել էին ուղղափառ եկեղեցում, այլ ոչ հայակական, քանի որ ինքը. «Ամբողջ կյանքին ընթացքին ուզեց ազատ ըլլալ հայերէ»⁴: Ի հեճուկս այս ամենի կար նրա որդին, ով «Կյանքի մէկ որոշ հանգրուանին ձեռնարկեց ճամբորդութեան մը, անձի համար յայտնագործելու թէ ի՞նչ կը նշանակէ հայ ըլլալ: Որովհետեւ հակառակ անոր որ անձնապէս հայ է, կամ՝ մասամբ հայ, մինչ այդ սակայն ոչինչ գիտեր հայերու կամ Հայաստանի մասին: Այսինքն՝ գրեթէ ոչինչ»⁵: Եվ բացի այդ, Մայքլ Արլենը իր վաղ շրջանում գրած «Լոնդոնյան արկածախնդրություն» վիպակում հայի տրորված ազգային արժանապատվության շուրջ մի միտք է արտահայտել, որը բոլորովին չի նշանակում, թէ արձակագիրը ուրացել է իրեն ծնած ժողովրդին. «Ինձ թվում է, ավելի լավ է լինել սպանված արքայազն Հայաստանում, քան ապրել որպէս թափառաշրջիկ Լոնդոնում»:

Արլեն Կրտսերին, ով մեծացել էր նման պայմաններում, ով երբեք չէր լսել հայերի ու նրանց անցյալի, նրանց պատմության մասին, ով հոր նման «բարդութավորված վերաբերմունք ուներ իր հայկական ծագման նկատմամբ», տարօրինակ, օտար, նույնիսկ ծայրահեղ տհաճ էր լսել հայերի պատմությունները Եղեռնի ու թուրքերի մասին, կարդալ Առաջին Աշխարհամարտին վերաբերող գրականություն, որտեղ կա գեթ փոքր ակնարկ հայ ժողովրդի վերաբերյալ՝ համարելով, որ այդ «անիծյալ ջարդերի» մասին խոսելը

³ Սուրյան Փ. Սպասումի մեկ դար, Երևան, 2015, էջ 88:

⁴ Արլեն Մ. Կրտսեր, Դեպի Արարատ, Երևան, 2000, էջ 19:

⁵ Նույն տեղում, 234 էջ:

ուղղակի ազգայանմուտության արգասիք է. «Գիտէի որ պէտք է սկսէի կարդալ հայերու մասին գրուած «դժուար» գրքերէն մէկ քանին- այսինքն՝ Ա. Աշխարհամարտէն ետք մշակուած գրականութիւնը ջարդերուն մասին- բայց գտայ որ դժուար էր ատիկա ընել: Պարզ հակադրութիւն մը չէր ատիկ-սոսկալի բաներու մասին կամ չարչարուող հայերու շուրջ չուզէնալէս չէր գար: ...Շատ քիչ պատճառ կար որ ես յանկարծ անկարող ըլլայի դիմագրաւելու ա՛յն՝ զոր թուրքերը ժամանակին գործած էին հայերու դէմ: Այսուհանդերձ, այս գրքերուն վերաբերեալ բան մը կար- այս պատմութիւններուն մէջ թաղուծ- որ ներքնապէս կը մտահոգէր զիս հո՛ն՝ ուր նախապէս բան մտահոգուած չէի.- բարոյական գարշանքէ մը աջելի բարդ բան մըն էր, աւելի տագնապեցնող քան բանդագուշանքի սարսուռը»⁶:

Նրա ժխտողական վերաբերմունքը պահպանվեց այնքան ժամանակ, քանի դեռ նա չսկսեց իսկական ճամփորդություն դեպի Արարատ (Passage to Ararat, 1975), դեպի սեփական արմատներ, մինչ այն պահը, երբ ոտք դրեց Հայաստան, եղավ Երևանում, ապրեց հայերի շրաջանում, ընթերցեց, սերտեց հայոց պատմությունը, ծանոթացավ մարդկանց հետ, ովքեր նրան իրենց ապրելակերպով ստիպեցին գիտակցել ու հասկանալ, թե ինչ է նշանակում լինել հայ. «Հայերը էին- մարդ չի կրնար այնքան ալ «ազգ» կոչել զիրենք, բայց ամէն պարագայի տակ՝ անոնք ներկայութիւն էին նախքան որ աշխարհը իր արդի ընմբռնումը գոյացնէր ազգերու եւ ազութիւններու մասին: Անոնք ներակայութիւն են նոյնիսկ հիմա- երկրագունտին վրայ տարածուած, կամ անգամ մը ես մէկտեղուած... »⁷:

Օտարագիր հայ գրողների ստեղծագործությունների շարքում ոչ պակաս դիտարժան է Լևոն- Զավեն Սյուրմեյանի «Ձեզ եմ դիմում տիկիներ և պարոններ» ինքնակենսագրական երկը, որտեղ հեղինակը ներկայացնում է իր մանկության և պատանեկության իրադարձությունները, ինչպես ինքն է ասում՝ «տասնամյա երեխայի աչքերով»:

Սյուրմեյանը դարձավ մեկը այն հայ երեխաներից, որոնք կարողացան ողջ մնալ: Սակայն նրա գոյապայքարը թուրքերի ու հանգամանքների դեմ նման չէր շատ շատերի

⁶ Արլեն Մ. Կրտսեր, Դեպի Արարատ, Երևան, 2000, էջ 37:

⁷ Նույն տեղում, էջ 143:

ճակատագրին. նա ստիպված էր անընդհատ փախչել, վախենալ, թաքնվել, հուսալ, ապավինել Աստծուն ու բարի մարդկանց ու վերապրել՝ հետագայում կատարվածի մասին կիսասարսափ խոսելու և պատմելու համար. «Ավելի քան կես դար է՝ վերապրողներս հիշում ենք դեռևս շժմած՝ պատահածից, անկարող՝ հասկանալու կամ այդ մասին խոսելու: Ես սիրտ չեմ անում մինչև իսկ մտածել այդ մասին: Նրանց համար ովքեր զոհ չգնացին մեր ազգային գոյությանը հասցված այս գրեթե մահացու հարվածին, խիստ կասկածելի է վերապրել անցյալը, իսկ ցնցումը դեռ շարունակվում է: Ճիշտ է այս գիրքը գրեցի ես, բայց կարողացա, տարիներ անց, լոկ մասնակի, կցկտուր մի պատկեր տալ որպես Ամերիկայում ապրող չափահաս մարդ, երբ այլևս ի վիճակի էի մի քիչ ավելի որոշակի, առարկայական խոսք ասել: Ամբողջ ժամանակ, որ գրում էի գիրքը սև ակնոց էի կրում ու ձևացնում էի, թե Կալիֆորնիայի պայծառ արևից աչքերս բորբոքվում են և դա ոչ միայն բաց օդում, որպեսզի թաքցնեի արցունքներս: «Բժշկի խորհուրդն է», մոլտում էի ես»⁸:

Սյուրմեյանը պատմում է մի անմեղ երեխայի կյանքը, ով երեկ հանգիստ ու խաղաղ խաղում էր հարևանի թուրք երեխաների հետ և մի օր բախվեց դառը իրականության հետ. ինքը «գյավուր էր» և թուրքերը կտրելու էին նրա վիզը: Դա նրան ասում է իր երեկվա խաղընկերը, ում հետ նա ժամերով խաղում էր տան բանկում, և այդ պահից սկսած նրա հեքիաթային աշխարհը փլուզվում-կործանվում է: Ապա՝ այս ամենին հաջորդող դեպքերը վերածվում են ահռելի պատահողմի, որոնք քշում-տանում են երեխային իրենց հորձանուտում, կայծակնային արագությամբ կատարվող դեպքերը նրա վրա խոր ազդեցություն են թողնում. հայրը՝ փորձելով ելք գտնել ընտանիքի կանանց համար, ինչ-որ կերպ թեթևացնելու նրանց տարհանումը (հեգնական է հնչում) նրանց բաժանում է դեղատնից բերված թույնը, փոքրիկ սրվակներով, այս դեպքերից Փոքրիկ Զավենի հոգում տեղի են ունենում այնպիսի փոփոխություններ, «որոնք փակում են կյանքի մի էջը և մի ուրիշն են բացում»: Եվ կյանքի այդ նոր էջում նա իրեն գտնում է մոր կողքին, կառքում նստած, ամերիկյան որբանոցի ճանապարհին. մայրը որդու փրկությունը տեսնում էր նրան ամերիկյան դեսպանության հոգաժողայանը հանձնելու մեջ: Դեռ այս էջը չլրացած երեխան իրեն գտնում է արդեն նոր վայրում՝ մահվան

⁸ Սյուրմեյան Լ. Զ., Ձեզ եմ դիմում տիկիններ և կարոններ, Երևան, 1979, էջ 6:

ճանապարհին, տարիանվողների շարքերում, իր երկու մեծ մայրերի ու քույրերի հետ, և այդ իրավիճակում ավելի երանելի էր մեռած լինել, քան կենդանի, և մեծ մայրիկը կայացրեց որոշում խմել թույնը, որի նվազ չափաբաժինը չունեցավ սպասելի արդյունքը, այլ միայն թուլացրեց նրանց ու գրկեց վերջին ուժերից: Ապա՝ երախան հայտնվում է քրդերի հովանավորության տակ, հեռու մահվան թափորից, կիսազատ ու կես ապահով, սակայն Չավենին այսպիսի փրկությունը չէր գոհացնում, նա ձգտում էր ավելիին՝ հեռու փախչել այդ «մահվան հսկայական թակարդ դարձած» երկրից, և դա նրան հաջողվում է, նա կարողանում է ճարակությամբ ճողոպրել թուրքերից, ապաստան է գտնում հրեաների մոտ և, ի վերջո, բազմաթիվ չարչարանքներից հետո գտնում իր ընտանիքը՝ համենայն դեպս այն, ինչ մնացել էր դրանից...«Ո՛չ եղբայրս, ո՛չ էլ քույրերս խոսեցին իրենց ամենացավատանջ ապրումներից, որոնք իմինների նման անպատմելի էին: Եվ իրոք, ոչինչ չէի կարող պատմել իմ մասին, ոչ էլ իրենք հարձուփորձեցին: Մի տեսակ գաղտնի դաշինքով զգույշ էինք՝ երբեք չխոսելու ծնողներից և ուրիշ ազգականներից, որոնց կաթոգին սիրում էինք: Մեր ամենախոր վշտերը թաղված էին մեր սրտերում՝ վերքեր, որոնք երբեք չէին բուժվի, ու մենք փորձում էինք մոռանալ այդ բոլորը՝ մեր միավորման ուրախության մեջ»⁹:

Չավենը հայտնվեց Ամերիկայում, նա փրկվեց ու վերապրեց, բայց նրա հոգում բացվեց մի անանցանելի անդուն, նրա սրտի վրա բացված բազմաթիվ վերքերը երբեք չսպիացան ու «Չեզ եմ դիմում տիկիններ ու պարոններ» գիրքը դարձավ այդ վերքերից առաջացած ցավի թարգմանը. «Տիկիններ՛ր և պարոններ, հիանալի է լինել Ամերիկայում, և ինչպես ասացի, ես երբևէ կկռվեմ Ամերիկայի համար, բայց մարդ ի՞նչ կարող է անել Ամանորի նախօրյակին, երբ ժամանակին կար մի վանք, նվիրված մի Փրկչի, որ չփրկեց իր ժողովրդին»...

Օտարագիր գրողները վերապրեցին ու վերհիշեցին, ստեղծեցին ստվարածավալ գրականություն Հայի մասին: Նրանք ստեղծեցին գործեր, որոնցում պատմեցին իրենց նախնիների պատմությունները, սակայն, ինչպես նշում է Լևոն-Չավեն Սուրմեյանը. «Ամբողջ չի պատմվել ու չի էլ կարելի պատմել: Մեռյալները ոչինչ չեն պատմում, իսկ վերապրողները տակավին մունջ են»¹⁰:

⁹ Սյուրմեյան Լ. Չ., Չեզ եմ դիմում տիկիններ և պարոններ, Երևան, 1979, էջ 177-178:

¹⁰ Նույն տեղում:

Վ. Սարոյանը և շատ ու շատ ուրիշներ ևս մեկ անգամ փաստեցին և իրենց ստեղծագործություններով հիմնավորեցին, որ ջնջել ու վերացնել Հայաստանը անհնար է. «Դե, թորձեք, ջնջեք Հայստանը, տեսեք կհաջողվի՞ ձեզ: Անապատը քշեք նրանց՝ առանց սննդի ու ջրի: Այրեք նրանց տներն ու եկեղեցիները: Իսկ հետո նայեք, ինչպես են նրանք ծիծաղում, երգում ու կրկին աղոթք հղում առ երկինք: Քանի որ եթե նրանցից թեկուզ երկու հոգու հաջողվի հանդիպել այս աշխարհում, կտեսնեք, որ նրանք նոր Հայաստան կարարեն»¹¹:

Ամերիկահայ խոշոր արձակագիր ու թատերագիր Վիլյամ Սարոյանի նախնիների ծննդավայրը Բիթլիսն է: Սարոյանը ծնվել և մահացել է Կալիֆորնիայի Ֆրեզնո քաղաքում, սակայն իր ողջ կյանքի ընթացքում, որպես անտեսանելի ներկայություն իր ուսերին է կրել հայության ոգին:

Սարոյանն իր ողջ կյանքն ապրեց երկատված. կենցաղում՝ հայկական աղմկոտ շունչ՝ խառնված ամերիկյան կենսաձևին, իսկ գրականության մեջ՝ ամերիկյան ավանդույթներին խոր հավատարմություն:

Նա գիտակցում է, որ ինքը մաս է կազմում ամերիկյան գրականության, թեև ազգակիցների շրջանում «հրում է» իրեն դեպի հայ գրական ընտանիք «Լեզուեն անդին»¹²:

Ուսուցման հարցեր: «Օտարագիկր հայ գրողներ» թեման ուսուցանվում է հանրակրթական դպրոցի երրորդ աստիճանում՝ ավագ դպրոցում, մասնավորապես, 12-րդ դասարանում:

Թեմայի ուսուցումը կարևոր և նշանակալից է այն առումով, որ աշակերտները ճանաչում են արդեն օտար ափերում հաստատված և օտար լեզվով ստեղծագործող հեղինակների կենսագրությանն ու ստեղծագործություններին:

Թեմայի ուսուցումը ավագ դպրոցում իրականացվում է 1 դասաժամի շրջանակներում, ինչն էլ լուրջ խոչընդոտ է թեմայի լիակատար և հիմնավոր

¹¹ Մարտեն Ֆ., Իսաչմերուկ. Ճամփորդություն հայաշատ վայրերով, Երևան 2008, էջ 20:

¹² Նյուֆը մշակված է. Դանիելեան Ա., Միջուկի տրոհումը, Սփիռքահայ գրականութեան պատմութիւն, Երևան, 2011, 407 էջ:

ուսումնասիրության համար, այդ իսկ պատճառով, առաջարկում ենք «Օտարագիր հայ գրողներ» թեմայի ուսուցանման հետևյալ տարբերակը:

Աշակերտների թեմայի հետ առավել հանգամանալից ծանոթացնելու համար, առաջարկում ենք ընտրել չորս կամ հինգ ստեղծագործություն (հաշվի առնելով դասարանի աշակերտների թիվը): Օրինակ՝ Լևոն-Չավեն Սյուրմելյանի «Ձեզ եմ դիմում տիկիններ՝ և պարոններ» վեպը, Մայքլ Արլեն Կրոսերի «Դեպի Արարատ» վեպը, Վիլյամ Սարոյանի «Հայր և հայր» պատմվածքը և «Իմ սիրտը լեռներում է» թատերգությունը:

Ստեղծագործությունների ուսուցումը իրականացնելու համար կարելի է ստեղծել միջառարկայական կապեր «Հայոց պատմություն» առարկայի հետ ցույց տալու համար օտարագիր հայ գրականության ստեղծման պատմական նախդրյալներն ու պայմանները. ներկայացնել 19-20-րդ դարերի Հայաստանում տեղի ունեցող պատմական իրակադրծություններն ու պատմական անցքերը՝ կապելով այդ ամենը օտարագիր գրականության սկզբնավորմանն ու զարգացմանը: Միջառարկայական կապ կարելի է ստեղծել թեմայի սկզբում, երբ օգտագործում ենք «Մտագրոհ» մեթոդը՝ աշակերտներին նախապատրաստելուն նոր նյութի հաղորդմանը:

Այնուհետև՝ դասի ուսուցման համար կարելի է կիրառել «Դասախոսություն» մեթոդը և ներկայացնել Օտարագիր հայ գրողների կյանքն ու ստեղծագործության համառոտ բնույթը՝ որպես տնային աշխատանք հանձնարարելով ընթերցել վերոնշյալ հեղինակների ստեղծագործությունների բնագրերը:

Ամփոփման դասը կարելի է իրականացանել կիրառելով «Գրական խմբակ» մեթոդը (մեթոդը համագործակցային ուսուցման և ուսումնառության մեթոդ է: «Գրական խմբակները» քննարկման խմբեր են, որոնք նախատեսված են նյութի ուսումնասիրության ու քննարկման համար: Այստեղ կարևորագույն դեր է խաղում սովորողների հետաքրքրվածությունը տեքստով: Ընդ որում, տեքստի ընտրությունը չափազանց մեծ է, քանի որ ոչ բոլոր ստեղծագործություններն են հավասարապես ընդունակ խթանելու հետաքրքրված արձագանք: Հատկապես մեծ հետաքրքրություն են առաջացնում այնպիսի տեքստերը, որոնցում նկարագրված է որևէ խորհրդավոր պատմություն կամ տեսքտը կարող է տարբեր ձևերով մեկնաբանվել: Արդյունավետ են նաև այն տեքստերը, որոնք խիստ արդիական են, ուղղակիորեն կապված են սովորողների իրական կյանքի հարցերի հետ) և այն համեմել միջառարկայակն կապն

ապահովող վերոնշյալ հեղինակների ստեղծագործությունների բնագրային հատվածների ընթերցանությամբ և քննարկումով (ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցում ուսուցանվում են թե՛ անգլերենը և թե՛ ֆրանսերենը, հետևաբար՝ աշակերտների համար անգլագիր և ֆրանսագիր գրողների ստեղծագործությունների բնագրային հատվածների ուսումնասիրությունը դժվարություն չի ներկայացնի):

«Գրական խմբակ» մեթոդը «Օտարագիր հայ գրողներ» թեմայի ուսուցման շրջանակներում կարելի է կիրառել հետևյալ կերպ. դասարանը բաժանվում է 6 հոգանոց 4 խմբի և յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է օտարագիր գրողներից մեկի ստեղծագործությունը՝

Խումբ 1: Լևոն-Չավեն Սյուրմեյանի «Ձեզ են դիմում տիկիններ՝ և պարոններ»

Խումբ 2: Մայքլ Արլեն Կրոսերի «Դեպի Արարատ»

Խումբ 3: Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է»

Խումբ 4: Մայքլ Արլեն «Կանաչ գլխարկ»:

«Գրական խմբակները» ունեն որոշակի կառուցվածք. քննարկման ժամանակ խմբի անդամները ստանձնում են տարբեր դերեր: Այդ դերերը բազմաթիվ են ու կարող են փոխվել յուրաքանչյուր քննարկման ժամանակ: Դերերը կարելի է բաժանել հետևյալ կերպ՝

1. Քննարկումը վարող: «Վերջինիս հանձնարարվում է կազմակերպել խմբային քննարկումը: Անելիքներից մեկն է կազմել հարցերի ցուցակ, որոնք քննարկվելու են գրքի ընտրված որևէ հատվածի առնչությամբ: Քննարկումը վարողի պարտականությունն է օգնել խմբի անդամներին քննարկել ընթերցված հատվածի հիմնական կամ կարևոր մտքերը և խմբի ներսում քննարկել յուրաքանչյուրի մտքներն ու զգացմունքները:

2. Կապակցող: Կապակցողի առաջադրանքն է կապեր գտնել գրքի և իրական աշխարհի միջև: Դա նշանակում է ընթերցված նյութը շաղկապել սեփական կյանքի և առօրյայի հետ:

3. Բառապաշարը հարստացնող/ թարգմանիչ: Մասնակիցը պետք է օգնի խմբի անդամներին հարստացնել բառապաշարը՝ ներկայացնելով հատվածի անձանոթ բառերը և ներկայացնելով դրանց բնագրային տարբերակները:

4. Գրական նյութը լուսաբանող: Վերջինիս հանձնարարությունն է գտնել մի քանի յուրօպրիհնակ կամ հետաքրքիր հատվածներ, որոնք խումբը կցանկանա լսել բարձրաձայն ընթերցմամբ:

5. Ցուցադրող: Ցուցադրողի հանձնարարությունն է ընթերցված նյութի վերաբերյալ մի պատկեր նկարել: Դա կարող է լինել ուրվանկար, ծաղրանկար, գծապատկեր կամ ստվերագծային նկար: Աշակերտը կարող է պատկերել որևէ դրվագ գրքից կամ այն, ինչի մասին մտածում էին ընթերցված հատվածի ազդեցության տակ:

6. Ամփոփող: Ամփոփողի հանձնարարությունն է կազմել ընթերցված նյութի համառոտագրությունը: Դրանք պետք է լինեն հիմնական մտքեր ու գաղափարներ, ինչպես նաև գրքի վերաբերյալ ամենավառ դրվագների խիստ սեղմ շարադրանքը: 2-3 թուպեի ընթացքում պետք է հաղորդի գրքի բովանդակությունը:

Քննարկումները կարող են տևել 20 թուպե: Ժամանակի ավարտից հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր կատարած աշխատանքի ամփոփ հաշվետվությունը:

Դասի վերջում ուսուցիչը կարող է ամփոփել թեման և կատարած աշխատանքը՝ մեջբերելով հատված դասագրքից՝ Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը՝ վերջ չունեցող պատերազմները, հարկահանությունները, ազգային և կրոնական հալածանքները, 1894-1923 թթ. Արևմտյան Հայաստանի տոհմիկ բնակչության եղեռնն ու բռնագաղթը, Խորհրդային Հայաստանում 1937, 1949 թթ. արքորենրը ժամանակի ընթացքում ստեղծել են այնպիսի պայմաններ, երբ հայության խոշոր զանգվածներ հեռացել են հայրենիքից և ապաստանել օտար երկրներում¹³:

Դժբախտաբար, արտագաղթը շարունակվում է նաև մեր օրերում և մենք այժմ էլ ունենք շատ ու շատ մշակութային գործիչներ, ովքեր իրենց գործունեությունը ծավալում են հայրենի ափերից հեռու և օտարության մեջ՝ ստեղծում և արարում են երկրներում, որոնք ընդունել են նրանց կամ նրանց նախնիներին:

Ոչ մեկ երբեք ինքնական չի ընտրի տարագրությունն ու օտարությունը, և, հատկապես, հայը, ով արյան կանչով ու արմատներով ամուր կառչած է իր հայրենիքից, բայց ճակատագիրն ու հանգամանքները հայի պատմության ճակատին դաջել են

¹³ Գասպարյան Դ., Քալանթարյան Ժ., Հայ գրականություն, Հանրակրթական դպրոցի 12-րդ դասագիրք, Երևան, 2023, էջ 185:

տարագրությունն ու օտարումը հայրենիքից, ինչը, սակայն, հիմք չէ օտարության մեջ ապրող հային դիտարկել օտար, նույն կերպ «այս ամենը պահանջում է օտաքրագիր հայ գրողների վաստակն ազգային-ազատագրական և համամարդկային ընդգրկումներով դիտարկել որպես մայր գրականության մի բաղկացուցիչ մասը և օրինաչափ համարել դրա ներգրավումն ազգային կրթության համակարգի մեջ¹⁴»:

¹⁴ Գասպարյան Դ., Քալանթարյան Ժ., Հայ գրականություն, Հանրակրթական դպրոցի 12-րդ դասագիրք, Երևան, 2023, էջ 187:

Եզրակացություն

Օտարագիր հայ գրողներ. ուսուցման հարցեր թեման ուսումնասիրելուց հետո հանգեցինք հետևյալ եզրակացություններին՝

1. Օտարագիր հայ գրականությունը ստեղծվել և զարգացել է ազգային արժեքներից որոշակի օտարման պայմաններում:
2. Օտարագիր հայ գրողների ստեղծագործությունները ոչ միայն հայ գրականության ժառանգությունն են, այլև այն երկրներինը, որտեղ ստեղծագործել են:
3. Օտարագիր հայ գրողների ուսուցման հարցերը անմիջականորեն կապված են 19-20-րդ դարերի պատմաքաղաքական իրադարձությունների հետ և դրանց ուսուցումը առանց միջառարկայական կապեր հաստատելու հնարավոր չէ իրականացնել:
4. Օտարագիր հայ գրողների ուսուցումը կարևոր է նրանով, որ յուրաքանչյուր հայ պետք է ճանաչի և հանգամանալից իմանա ոչ միայն հայերենով ստեղծագործող գրողներին և նրանց ստեղծագործությունները, այլև օտար լեզուներով ստեղծագործող հեղինակներին:

Գրականության ցանկ

1. Արլեն Մ. Կրտսեր, Դեպի Արարատ, Երևան, 2000, 234 էջ:
2. Բալաքյան Փ., Ճակատագրի սև շունը, Երևան, 2002, 363 էջ:
3. Գասպարյան Դ., Քալանթարյան Ժ., Հայ գրականություն, Հանրակրթական դպրոցի 12-րդ դասագիրք, Երևան, 2023, 224 էջ:
4. Դանիելյան Ս., Միջուկի տրոհումը, Սփիռքահայ գրականության պատմություն, Երևան, 2011, 407 էջ:
5. Եղիազարյան Ա., Հայ գրականություն, Դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 12-րդ դասարանների համար, Երևան, 2023, 184 էջ:
6. Մարտինյան Ֆ., Խաչմերուկ. Ճամփորդություն հայաշատ վայրերով, Երևան 2008, 288 էջ:
7. Սյուրմեյան Լ. Զ., Ձեզ եմ դիմում տիկիններ՝ և կարոններ, Երևան, 1979, 304 էջ:
8. Սուրյան Փ. Սպասումի մեկ դար, Երևան, 2015, 159 էջ: